# ՎՐՈՒՅՐ ՍԱՐԳՍՅԱՆԸ 75 ՏԱՐԵԿԱՆ Է

Լրացավ տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի «Հիդրոշինարարություն, ջրային համակարգեր և հիդրոէլեկտրակայաններ» ամբիոնի վարիչ Վրույր Սարգսյանի ծննդյան 75 և գիտական, մանկավարժական գործունեության 50 տարին: Վ.Սարգսյանը ծնվել է 1935թ. դեկտեմբերի 27-ին: 1954 թվին ավարտելով Երևանի թիվ 45 դպրոցը՝ ընդունվել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի հիդրոմելիորացիայի ֆակուլտետը, որն ավարտել է 1959 թ. և ստացել հիդրոտեխնիկ-ճարտարագետի որակավորում: 1959-62թթ. աշխատել է Հիդրոտեխնիկայի և մելիորացիայի հայկական գիտահետազոտական ինստիտուտում:

1962-65թթ. Վ. Սարգսյանը սովորել է Մոսկվայի ջրամատակարարման, կոյուղու, ինժ. հիդրոերկրաբանության և հիդրոտեխնիկայի համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտուրայում, որն ավարտելուց հետո աշխատել է Մոսկվայի միութենական ջրային տնտեսության «Հիդրոնախագիծ» գիտահետազոտական նախագծային ինստիտուտում, որպես խմբի ղեկավար և գլխավոր մասնագետ: Այստեղ նա մասնակցել է մի շարք կարևոր օբյեկտների նախագծմանը, նորմատիվային փաստաթղթերի մշակմանը, կազմակերպել հետազոտական-փորձարարական արդյունքների մշակումը հաշվիչ մեքենաների օգնությամբ և այլն:

1969-82թթ. Վ.Սարգսյանն աշխատել է Մոսկվայի "ВНИИВОДГЕО" ինստիտուտի հատուկ հիդրոտեխնիկական կառուցվածքների լաբորատորիայում, որտեղ զբաղվել է ժող. տնտեսության համար շատ կարևոր՝ արդյունաբերության ռադիոակտիվ թունավոր թափոնների թաղման և վնասազերծման հիմնահարցի լուծմամբ: Վ.Սարգսյանը մշակել է Երկրի կեղևի խորը շերտերում այդ նպատակով պահեստարանների ստեղծման և դրանց հիդրոդինամիկական հաշվարկման մեթոդներ: Այդ և այլ ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա նա գրել է իր դոկտորական ատենախոսությունը:

Վ.Սարգսյանի կողմից առաջարկվել են դիֆ.հավասարումների համակարգեր, որոնցով բնութագրվում են միմյանցից խտությամբ և մածուցիկությամբ տարբերվող հեղուկների՝ ծակոտկեն միջավայրում շարժման օրինաչափությունները: Այդ հավասարումների լուծման արդյունքները ակադեմիկոսներ Սեդովի, Տիխոնովի, Կոչինայի ներկայացմամբ տպագրվել են ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի «Զեկույցներում»:

Հաշվի առնելով ռադիոակտիվ թափոնների տրոհումից ջերմաստիճանի բարձրացման վտանգը՝ 1976-77թթ. Վ.Սարգսյանի մասնակցությամբ մշակվել է նաև դրանց ջերմային ռեժիմի կանխագուշակումը:

Գիտության և տեխնիկայի պետական կոմիտեի հանձնարարությամբ Վ.Սարգսյանը 1977-82թթ. մասնակցել է Եվրոպական և Սիբիրի ջրային ռեսուրսների վերբաշխման հետ կապված հարցերի լուծմանը:

1982թ. Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի հրավերով Վ.Սարգսյանը տեղափոխվել է Երևան և անցել գիտամանկավարժական աշխատանքի: Նրա ակտիվ մասնակցությամբ ինստիտուտում կազմակերպվեց «Գրունտների մեխանիկա, հիմքեր և հիմնատակեր» ամբիոնը, որի հետ 2006թ է.Թոքմաջյանի առաջարկությամբ միավորվեցին «Հիդրոտեխնիկական շինարարություն» և «Ջրամատակարարում և ջրահեռացում» ամբիոնները: Ամբիոնում Վ.Սարգսյանի ղեկավարությամբ տարվում են բազմաբնույթ գիտական և ուսումնամեթոդական աշխատանքներ:

1985-87թթ. Հայաստանի ջրային տնտեսության նախարարության առաջարկությամբ Մասիսի շրջանում կատարվել են Երկրի մակերևույթի նստվածքների որոշման փորձարարական և տեսական ուսումնասիրություններ՝ պայմանավորված ստորգետնյա ջրերի հորիզոնի իջեցման հետ:

1989թ. նախարարների խորհրդի որոշմամբ Վ.Սարգսյանի ղեկավարությամբ մեթոդական մեծ օգնություն է ցույց տրվել մասնագետներին՝ տեղանքի հետազոտական աշխատանքների բարձր մակարդակով կատարելու և ջրածածկումից հիմքերը պաշտպանելու համար: 1990թ. Պետշինի «Ինժնախագիծ» ինստիտուտի առաջար-կությամբ Լենինական (Գյումրի) քաղաքի տարածքում ստորգետնյա ջրերի հորիզոնի իջեցման ուղղությամբ կատարվել են հետազոտություններ, որոնք հնարավորություն են տալիս մեծացնել կառուցվածքների սեյսմակայունությունը: Աղետի գոտում ակտիվ և պարբերաբար աշխատանք կատարելու համար Վ.Սարգսյանը 1989թ. արժանացել է ԽՍՀՄ Պետշինի պատվոգրի:

Պրոֆ. Վ.Սարգսյանը գիտության հմուտ կազմակերպիչ է: Նրա ղեկավարությամբ բազմաթիվ ասպիրանտներ և հայցորդներ պատրաստել են իրենց թեկնածուական, իսկ երկու գիտության թեկնածու՝ դոկտորական ատենախոսությունները: Վ.Սարգսյանի հոդվածները պարբերաբար տպագրվում են ԳԱ «Զեկույցներում» և «Տեղեկագրերում»:

Պրոֆ. Վ.Սարգսյանը ճանաչված մասնագետ է ջրային ռեսուրսների, երկրամեխանիկայի և երկրահիդրոմեխանիկայի ասպարեզներում, նրա գրչին են պատկանում 250-ից ավելի գիտական աշխատանքներ, հոդվածներ ու մենագրություններ, տպագրված Մոսկվայի և Հանրապետության հրատարակչություններում: Դրանց մի մասը թարգմանված է արտերկրում:

1971թ. Վ.Սարգսյանի մենագրությունը արժանացել է ժողովրդական տնտեսության նվաճումների համամիութենական ցուցահանդեսի արծաթե մեդալի:

Պրոֆ. Վ.Սարգսյանը զեկուցումներով հանդես է եկել Համամիութենական և միջազգային համագումարներում, գագաթաժողովներում և գիտաժողովներում ջրային ռեսուսների, տեսական և կիրառական երկրահիդրոմեխանիկայի զանազան հարցերի վերաբերյալ:

Տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Ս.Սարգսյանը խոշոր ներդրում ունի տեսական և կիրառական երկրահիդրոմեխանիկայի և երկրամեխանիկայի ասպարեզներում: Նա գիտության այդ ասպարեզը հարստացրել է առաջնակարգ գիտական նշանակություն ունեցող արդյունքներով պատրաստել է բազմաթիվ գիտական կադրեր: Վ.Սարգսյանը երեք միջազգային կազմակերպությունների և ՀՀ տեսական և կիրառական մեխանիկայի ազգային կոմիտեի, մի շարք նախարարությունների և ինստիտուտների խորհուրդների, ինչպես նաև 030 և 055 գիտական մասնագիտացված խորհուրդների, ԳԱԱ-ի «Տեղեկագրի» (տեխնիկական գիտություններ) խմբագրական կոլեգիայի անդամն է:

*Տեղեկագրի խմբագրական կոլեգիան շնորհավորում է գործընկերոջ 75-ամյակը և ցանկանում հետագա բեղմնավոր աշխատանք.*